



Consulting&Audit

«ԷՅՎԻՍԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ԸՆԴ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ

«ԵՐԵՎԱՆ ՄՈԼ» ՍՊԸ

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ
ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

2021Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՇՎԵՓԱԿՎԱԾ ՏԱՐՎԱ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**ԵՐԵՎԱՆ
ՀՈՒՆԻՍ- 2022**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անկախ աուդիտորի եզրակացություն.....	2
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն.....	4
Հաճապարիակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն.....	5
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն.....	6
Իրավական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն.....	7
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ.....	8

«ԷՅՎԻՍԻ ԲՈՆՍԱԼԹԻՆԳ ԸՆԴ ԱՈՒԴԻՑ» ՍՊԸ



Consulting&Audit

ՀՀ, ք Երևան Նուբարաշեն, 10 փող, տուն 6

ՏՊՀ, Երևան, Մյասնիկյան պողոտա 5/1

Հեռ: (010) 57 28 46

ԱՈՒԴԻՑՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ 048,

ՏՐՎԱԾ ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՏ - 02.08.2006թ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՑՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱԾՎԱԳԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀՎ ԱՆԴԱՄ,
ԳՐԱՆՑՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ 2020Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29, ՀԳՀՀ 1 20 0440

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՑՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Երևան Մոլ»
սահմանափակ պատասխանատվության ընկերության մասնակիցներին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Երևան Մոլ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2021թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (այսուհետ՝ ՓՄԿ-ի ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Աուդիտի անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (<ՄԴ-Վարքագիր>) և ՀՀ-ում կիրառելի ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող վարքագրի պահանջների, և պահպանել ենք վարքագրի նկատմամբ մեր մյուս պահանջները՝ այդ կանոնների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՓՄԿ-ի ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք: Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

«Երևան մոլ» ՍՊԸ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆին. հաշվ. աուդիտ

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի յրդմն մենք՝

ձեռք ենք բերում առողիտին՝ վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան առողիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,

Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների վերաբերյալ էական անորոշություն, որը կարող են նշանակալի կասկած հարուցել ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել՝ ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են միևնույն մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Մակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը,

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցվում ենք կառավարման օղակներում գտնվող անձանց հետ աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

06 հունիսի 2022թ.

Գիտապիտր տնօրենն՝

Առնիկա



**Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

Հազար ՀՀ դրամ	Ծանոթագրություն	2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱԿՏԻՎ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	9 773 848	10 075 126
Ոչ նյութական ակտիվներ	5	93 774	94 485
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	6	750	2 589
Հետաձգված հարկային ակտիվներ	13	42 870	45 749
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		9 911 241	10 217 949
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	7	94 468	87 534
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	8	653 917	715 895
Ֆինանսական ներդրումներ	9	384 333	450
Դրամական միջոցներ	10	704 211	384 530
Այլ ընթացիկ ակտիվներ		145	135
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		1 837 073	1 188 544
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		11 748 314	11 406 493
ԿԱՊԻՏԱԼ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Սեփական կապիտալ			
Համալրված բաժնետիրական կապիտալ	11	156 674	156 674
Էմիսիոն եկամուտ	11	5 531 529	5 531 529
Զբաղիված շահույթ (չձեռք բերված վնաս)		1 533 037	(71 944)
Ընդամենը սեփական կապիտալ		7 221 240	5 616 259
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	12	3 694 773	5 115 568
Վարձակալական վճարների գծով ստացված ոչ ընթացիկ կանխավճարներ	14	69 188	73 739
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		3 763 961	5 189 307
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	12	210 232	257 151
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	14	423 347	218 807
Պահուստներ	15	129 534	124 969
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		763 113	600 927
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		11 748 314	11 406 493

Տնօրեն՝

Վ. Մեկոյան

Գլխավոր հաշվապահ՝

Ն. Մանուկյան


Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից 2022թ. հունիսի 6-ին: Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ (էջ 8-24):

**Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար**

Հազար ՀՀ դրամ	Ծանոթագրություն	2021թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Շարունակվող գործունեություն			
Հասույթ	16	4 383 641	2 608 248
Վանառված ապրանքների ինքնարժեք	16	(61 778)	(18 305)
Ծառայությունների մատուցման գծով ծախսեր	17	(1 643 175)	(1 390 606)
Վարչական ծախսեր	18	(858 366)	(949 179)
Այլ եկամուտ	19	6 375	2 163
Այլ ծախսեր	19	(35 333)	(165 932)
Ֆինանսական ծախսեր	20	(312 325)	(315 593)
Այլ օգուտ (կորուստ)	21	348 811	(386 475)
Զուտ շահույթ (վնաս) նախքան հարկումը		1 827 850	(615 679)
Շահութահարկի գծով ծախս	22	(222 869)	21 821
Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)		1 604 981	(593 858)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		1 604 981	(593 858)

Տնօրեն՝

Վ. Մեկոյան



Գլխավոր հաշվապահ՝

Ն. Մանուկյան

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ (Էջ 8-24):

**Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար**

Հազար ՀՀ դրամ	Կանոնադրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Զբաղիված շահույթ (չձածկված վնաս)	Ընդամենը
2020թ հունվարի 1-ի դրությամբ	156 674	5 531 529	521 914	6 210 117
Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)	-	-	(593 858)	(593 858)
2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	156 674	5 531 529	(71 944)	5 616 259
2021թ հունվարի 1-ի դրությամբ	156 674	5 531 529	(71 944)	5 616 259
Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)	-	-	1 604 981	1 604 981
2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	156 674	5 531 529	1 533 037	7 221 240

Տնօրեն

Վ. Սեփյան



Գլխավոր հաշվապահ՝

Ն. Մանուկյան

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ (էջ 8-24):

**Դրամական հոսքերի մասին հաշվետվություն
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

Հազար ՀՀ դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Դրամական միջոցների տարեկան մնացորդը	384 530	376 108
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ	5 198 438	2 962 546
Այլ մուտքեր	2 763	1 228
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(607 693)	(638 253)
Մատակարարներին և այլ կրեդիտորներին վճարված դրամական միջոցներ	(1 714 334)	(1 190 421)
Վճարումներ բյուջե	(675 768)	(608 677)
Այլ վճարումներ	(61 875)	(51 679)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	2 141 529	474 744
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռք բերումների գծով վճարներ	(6 152)	(12 518)
Բանկերում տեղաբաշխված ավանդներ	(381 245)	-
Բանկերում տեղաբաշխված ավանդների մարում	-	-
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(387 397)	(12 518)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարկերից և փոխառություններից մուտքեր	-	1 291 426
Վարկերի և փոխառությունների մարումներ	(1 416 645)	(1 513 708)
Ֆինանսական այլ գործունեությունից ելքեր, այդ թվում՝	-	(230 723)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(1 416 645)	(453 005)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ	337 486,74	9 221
Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(17 806)	(799)
Դրամական միջոցների տարեկան մնացորդը	704 211	384 530

Տնօրեն՝

Վ. Մեկոյան



Գլխավոր հաշվապահ՝

Ն. Մանուկյան

Դրամական հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (Էջ 8-24)

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1 Ընկերության մասին

«Ծին-Տավր» սահմանափակ պատասխանատվության ընկերությունը, (այսուհետ՝ Ընկերություն) ստեղծվել է «Արաքս Գոլդ» առևտրաարտադրական համատեղ ձեռնարկություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության առանձնացման ճանապարհով վերակազմավորման արդյունքում և հանդիսանում է նրա իրավահաջորդը: Ընկերության կանոնադրությունը գրանցվել է 14.09.2007թ, գրանցման թիվ 222.110.00825: 18.01.2018թ կանոնադրությամբ կատարված փոփոխությունով «Ծին-Տավր» ՍՊԸ-ն վերանվանվել է «Երևան Սոլ» սահմանափակ պատասխանատվության ընկերության:

Ընկերության գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց պողոտա 34/3:

Ընկերության կառավարման մարմիններն են՝ բաժնետերերի ընդհանուր ժողովը և Ընկերության տնօրենը: 2021թ Ընկերության աշխատողների միջին ցուցակային թիվը կազմել է 137 մարդ, իսկ 2020թ՝ 139 մարդ:

1.2 Հիմնական գործունեությունը

առևտրի իրականացման վայրի կազմակերպման գործունեություն

կինոդիտումների և ժամանցային այլ գործունեություն

Գործունեության համար ՀՀ էկոնոմիկայի նախարարի 06.09.2013թ համար 809-Ա հրամանով տրվել է առևտրի իրականացման վայրի կազմակերպման գործունեության թիվ 000124 համարի լիցենզիա, որի գործունեությունը անժամկետ է:

2. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմունքները

2.1 Համապատասխանության մասին հայտարարություն

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ ՓՄԿ-ի ՖՀՄՍ) պահանջների համաձայն:

2.2 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

2.3 Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

Ընկերության ֆունկցիոնալ արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է՝ ՀՀ դրամը (դրամ): Այն հանդիսանում է նաև Ընկերության ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՓՄԿ-ի ՖՀՄՍ-ի համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

3. Նշանակալի հարցերի նկատմամբ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

3.1 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցի միավորը՝ որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը արժեզրկումից կուտակված կորուստները: Սկզբնական

արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Հիմնական միջոցի մաշվածության գումարն իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխվում է՝ կիրառելով մաշվածության հաշվարկման գծային մեթոդը: Հիմնական միջոցի մաշվածության հաշվարկումը սկսվում է, երբ այն մատչելի է շահագործման համար, այսինքն, երբ հիմնական միջոցի գտնվելու վայրը և վիճակը ապահովվում են նրա շահագործումը: Ընկերության մտադրություններին համապատասխան: Յուրաքանչյուր ժամանակաշրջանի մաշվածության գումարը ճանաչվում է ֆինանսական արդյունքներում, բացառությամբ եթե այն ներառվել է մեկ այլ ակտիվի հաշվեկշռային արժեքում:

Հիմնական միջոցների համար սահմանված օգտակար ծառայության ժամկետներն են.

սարքավորումներ

5-8 տարի

արտադրատնտեսական գույք

5-8 տարի

հաշվողական և համակարգչային տեխնիկա

1-5 տարի

3.2 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվի միավորը՝ որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կուտակված կորուստները:

Ոչ նյութական ակտիվի ամորտիզացիան հաշվարկվում է այն պահից, երբ ակտիվը մատչելի է օգտագործման համար:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ կիրառելով գծային մեթոդը:

Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են՝

Համակարգչային ծրագրեր

3-10 տարի

Ոչ նյութական ակտիվն ապաճանաչվում է օտարման ժամանակ, կամ երբ օգտագործումից կամ օտարումից այլևս ապագա տնտեսական օգուտներ չեն ակնկալվում: Ոչ նյութական ակտիվի ապաճանաչումից առաջացած օգուտը կամ կորուստը, որը չափվում է որպես օտարումից գուտ մուտքերի և ակտիվի հաշվեկշռային արժեքի միջև տարբերություն, ճանաչվում է շահույթում կամ վնասում, երբ այդ ակտիվն ապաճանաչվում է:

3.3 Ներդրումային գույք

Ընկերությունը ներդրումային գույքը սկզբնական ճանաչման պահին պետք է չափի իր ինքնարժեքով (սկզբնական արժեքով): Գնված ներդրումային գույքի ինքնարժեքը ներառում է դրա գնման գինը և ուղղակիորեն վերագրելի ցանկացած ծախսում, օրինակ՝ իրավաբանական և բրոքերային ծառայությունների դիմաց վճարները, գույքի փոխանցման գծով հարկերը, ինչպես նաև գործարքի հետ կապված այլ ծախսումներ: Եթե վճարումը վճարման սովորական պայմաններում նախատեսված ժամկետներից հետաձգվում է, ինքնարժեքը ապագա բոլոր վճարումների ներկա արժեքն է:

Ներդրումային գույքը, որի իրական արժեքը կարող է արժանահավատորեն չափվել՝ առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի, յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ պետք է չափվի իրական արժեքով՝ իրական արժեքում փոփոխությունները ճանաչելով շահույթում կամ վնասում: Ընկերությունը բոլոր այլ ներդրումային գույքը պետք է հաշվառի որպես հիմնական միջոց՝ կիրառելով ինքնարժեք-մաշվածություն-արժեզրկում մոդելը:

3.4 Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար ֆունկցիոնալ արժույթից տարբերվող այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված՝ արտարժույթային շուկաներում արտարժույթի նկատմամբ հայկական դրամի միջին փոխարժեքով:

Յուրաքանչյուր հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքը, սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործառնության ամսաթվի փոխանակման փոխարժեքով և իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են իրական արժեքի որոշման օրվա փոխանակման փոխարժեքով: Այն ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Փոխարկման հետևանքով առաջացած արտարժույթային տարբերությունները ճանաչվում են ֆինանսական արդյունքում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

3.5 Դրամական միջոցներ և համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները, բանկի հաշվարկային հաշվում ունեցած միջոցները, ինչպես նաև երեք ամիս և պակաս ժամկետայնությամբ ընթացիկ ավանդներն ու այլ կարճաժամկետ բարձր իրացվելի ներդրումները:

3.6 Պաշարներ

Պաշարները չափվում են ինքնարժեքից և հնարավոր իրացման գույք արժեքից նվազագույնով:

Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման, արտադրանքի վերամշակման բոլոր ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները: Պաշարների հնարավոր իրացման գույք արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները:

Փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է «առաջին մուտք, առաջին ելք» բանաձևով: Փոխադարձ փոխարկելի չհանդիսացող պաշարների, ինչպես նաև հատուկ ծրագրերի համար նախատեսված ու արտադրված ապրանքների կամ ծառայությունների միավորի ինքնարժեքը որոշվում է դրանց կոնկրետ ծախսումների հստակ առանձնացման միջոցով:

Երբ պաշարները վաճառվում են, դրանց հաշվեկշռային արժեքը ճանաչվում է որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ ճանաչվում է դրանց հետ կապված հասույթը:

3.7 Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները), և պարգևավճարները:

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց զեղչման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելուց հետո:

3.8 Հասույթ

Ընկերության հասույթը պետք է չափի ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով: Ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքը հաշվի է առնում Ընկերության կողմից տրամադրվող ցանկացած առևտրական զեղչերի, ժամկետից շուտ վճարման զեղչերի և քանակային զիջումների գումարները:

Ընկերության հասույթում պետք է ներառի ստացված կամ ստացվելիք տնտեսական օգուտների միայն այն համախառն ներհոսքը, որը պատկանում է տվյալ Ընկերությանը: Ընկերության հասույթում չպետք է ներառի երրորդ անձանց անունից հավաքագրված բոլոր գումարները, օրինակ՝ վաճառքից հարկերը, ապրանքների և ծառայությունների գծով հարկերը և ավելացված արժեքի հարկը:

3.9 Ծնորհներ

Ընկերությունը որպես շնորհ հաշվառում է հիմնադրից ստացված միջոցները, որոնք ճանաչվում և չափվում են իրական արժեքով:

Ծնորհը չի ճանաչվում, քանի դեռ կա հիմնավորված երաշխիք, որ Ընկերությունը կատարելու է դրան կից պայմանները և, նոր շնորհը ստացվելու է:

Ծնորհները ճանաչվում են որպես եկամուտ սխտեմատիկ հիմունքով այն ժամանակաշրջանների ընթացքում, երբ Ընկերությունը որպես ծախս է ճանաչում դրանց համապատասխան ծախսումները, որոնց փոխհատուցման համար նախատեսված են շնորհները: Երբ շնորհը վերաբերում է ակտիվներին, այն ճանաչվում է որպես հետաձգված եկամուտ և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հաշվառվում է հավասարաչափ գումարներով՝ համապատասխան ակտիվի ակնկալվող օգտակար ծառայության ընթացքում:

Շնորհը, որը ստացման ենթակա է դառնում՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որի նպատակն է Ընկերությանը տրամադրել անհետաձգելի ֆինանսական օգնություն՝ առանց դրա հետ կապված հետագա ծախսումների, պետք է ճանաչվի որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ այն դառնում է ստացման ենթակա:

3.10 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապահանջվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ երբ փոխանցվում են ֆինանսական ակտիվները, բոլոր նշանակալից ռիսկերն ու հատուցումները:

Ֆինանսական պարտավորությունները ապահանջվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Երբ ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը սկզբնապես ճանաչվում է, Ընկերությունը պետք է այն չափի գործարքի գնով (ներառյալ գործարքի հետ կապված ծախսումները):

Ընկերության ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորություններն ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 18 -ում:

3.11 Ակտիվների արժեզրկում

Արժեզրկումից կորուստը առաջանում է, երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է դրա փոխհատուցվող գումարը: Ակտիվի փոխհատուցվող գումարը դրա իրական արժեքից՝ հանած վաճառքի ծախսումները, և օգտագործման արժեքից առավելագույնն է:

Իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումները, ակտիվի վաճառքից ստացվող գումարն է՝ իրազեկ և պատրաստակամ կողմերի միջև «անկախ կողմերի միջև գործարքում»՝ հանած օտարման ծախսումները:

Օգտագործման արժեքը ապագա դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքն է, որն ակնկալվում է ստանալ ակտիվից:

Ընկերությունը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ պետք է գնահատի՝ առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի՝ ակտիվը կարող է արժեզրկված լինել: Եթե առկա է որևէ այդպիսի հայտանիշ, ապա Ընկերությունը պետք է գնահատի ակտիվի փոխհատուցվող գումարը: Եթե արժեզրկման որևէ հայտանիշ չկա, ապա անհրաժեշտ չէ գնահատել փոխհատուցվող գումարը:

Ընկերությունը արժեզրկումից կորուստը պետք է անմիջապես ճանաչի շահույթում կամ վնասում:

Ընկերությունը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ պետք է գնահատի, թե առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի հնարավոր է, որ նախորդ ժամանակաշրջաններում ճանաչված արժեզրկումից կորուստը այլևս գոյություն չունի կամ նվազել է:

Ընկերությունը արժեզրկումից կորուստի հակադարձումը անմիջապես պետք է ճանաչի շահույթում կամ վնասում:

3.12 Պահուստներ, պայմանական ակտիվներ և պարտավորություններ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Ընկերությունը ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը պետք է իրենից ներկայացնի այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար: Չեղյման դրույքը պետք է լինի այն դրույքը՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները:

Ցուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պահուստները պետք է վերանայվեն և ճշգրտվեն՝ ընթացիկ լավագույն գնահատականը արտացոլելու համար: Եթե այլևս հավանական չէ, որ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, ապա պահուստը պետք է հակադարձվի:

Պահուստը պետք է օգտագործվի միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

Պայմանական ակտիվները չեն ճանաչվում ֆինանսական հաշվետվություններում, բայց բացահայտվում են, երբ տնտեսական օգուտների մուտքը հավանական է համարվում:

Պայմանական պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական հաշվետվություններում այն դեպքում, երբ հավանական է պարտավորությունը լուծելու համար տնտեսական օգուտների արտահոսք և այդ արտահոսքը կարող է խելամոռեմ գնահատվել: Դրանք բացահայտվում են այնքան ժամանակ, մինչև տնտեսական օգուտները մարմնավորող միջոցների արտահոսքի հավանականությունը շատ փոքր է:

4. Հիմնական միջոցներ

Հազար ՀՀ դրամ	Շենքեր, հողամասեր	Մեքենա - սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Տնտեսական գույք, արտադրական գույք	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Համախառն հաշվեկշռային արժեք						
2020թ հունվարի 1-ի դրությամբ	12 894 763	427 330	1 469	1 011 896	2 019 880	16 355 338
Ավելացումներ	10 637	53	-	21 030	20 840	52 560
Օտարումներ, դուրս գրումներ	-	-	-	-	(183)	(183)
2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	12 905 400	427 383	1 469	1 032 926	2 040 537	16 407 715
2021թ հունվարի 1-ի դրությամբ	12 905 400	427 383	1 469	1 032 926	2 040 537	16 407 715
Ավելացումներ	37 280	1 899	-	9 825	632	49 636
Օտարումներ, դուրս գրումներ	-	-	-	-	-	-
2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	12 942 680	429 282	1 469	1 042 751	2 041 169	16 457 351
Կուտակված մաշվածություն						
2020թ հունվարի 1-ի դրությամբ	2 668 613	426 234	203	687 191	1 908 810	5 691 051
Տարվա ծախս	462 456	1 082	190	123 698	54 295	641 721
Օտարումներ, դուրս գրումներ	-	-	-	-	(183)	(183)
2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	3 131 069	427 316	393	810 889	1 962 922	6 332 589
2021թ հունվարի 1-ի դրությամբ	3 131 069	427 316	393	810 889	1 962 922	6 332 589
Տարվա ծախս	277 847	180	189	56 036	16 662	350 914
Օտարումներ, դուրս գրումներ	-	-	-	-	-	-
2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	3 408 916	427 496	582	866 925	1 979 584	6 683 503
Զուտ հաշվեկշռային արժեք						
2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	9 774 331	67	1 076	222 037	77 615	10 075 126
2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	9 533 764	1 786	887	175 826	61 585	9 773 848

2021թ. դեկտեմբերի 31-ի և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության Արշակունյաց պողոտա 34/3 հասցեում գտնվող անշարժ գույքը գրավադրվել է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում ստացված վարկի դիմաց: 9 533 764 հաշվեկշռային արժեքով շենքի որոշ մասը արված է վարձակալությամբ՝ մանրածախ առևտրով և ծառայությունների մատուցմամբ (ներառյալ հանրային սնունդ) զբաղվող կազմակերպություններին, իսկ որոշ մասը օգտագործվում է կազմակերպության կողմից: Քանի որ ներդրումային գույքի բաղադրիչի իրական արժեքը չի կարող արժանահավաստորեն չափվել՝ առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի, շենքն ամբողջությամբ հաշվառվել է որպես հիմնական միջոց:

5. Ոչ նյութական ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	Համակարգչային ծրագրեր	Այլ	Օգտագործման համար ոչ մատչելի ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք				
2020թ հունվարի 1-ի դրությամբ	81 730	21 184	-	102 914
Ավելացումներ	32 405	-	-	32 405
Օտարումներ, դուրս գրումներ	-	-	-	-
2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	114 135	21 184	-	135 319
2021թ հունվարի 1-ի դրությամբ	114 135	21 184	-	135 319
Ավելացումներ	12 651	6 347	1 600	20 598
Օտարումներ, դուրս գրումներ	-	-	-	-
2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	126 786	27 531	1 600	155 917
Կուտակված մաշվածություն				
2020թ հունվարի 1-ի դրությամբ	13 177	16 205	-	29 382
Տարվա ծախս	7 674	3 778	-	11 452
Նվազեցումներ	-	-	-	-
2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	20 851	19 983	-	40 834
2021թ հունվարի 1-ի դրությամբ	20 851	19 983	-	40 834
Տարվա ծախս	18 522	2 787	-	21 309
Նվազեցումներ	-	-	-	-
2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	39 373	22 770	-	62 143
Չուտ հաշվեկշռային արժեք				
2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	93 284	1 201	-	94 485
2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	87 413	4 761	1 600	93 774

6. Այլ ոչ ընթացիկ ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տրված կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվներ ձեռք բերելու համար	750	2 589
Ընդամենը	750	2 589

7. Պաշարներ

Հազար ՀՀ դրամ	2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Նյութեր	49 975	72 294
Պահեստամասեր	2 537	835
Շինանյութեր	16 660	20 515
Ապրանքներ	24 410	11 650
Այլ	886	756
	94 468	106 050
Նյութերի ինքնարժեքի՝ մինչև իրացման զուտ արժեքի իջեցում	-	(18 516)
	94 468	87 534

2021թ. դեկտեմբերի 31-ի և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի գրավադրված պաշարներ:

8. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար ՀՀ դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	627 449	612 572
Դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստ	(108 632)	(110 684)
Ընդամենը ընթացիկ առևտրային պարտքեր	518 817	501 888
Տրված ընթացիկ կանխավճարներ	113 029	138 605
Դեբիտորական պարտքեր բյուջեին շահութահարկի գծով	-	64 570
Դեբիտորական պարտքեր բյուջեին այլ հարկերի և պարտադիր վճարների գծով	18 069	5 380
Դեբիտորական պարտքեր առհաշիվ տրված գումարների գծով	3 350	4 461
Դեբիտորական պարտքեր աշխատավարձի վճարման գծով	652	991
	653 917	715 895

Ընկերության դեբիտորական պարտքերի մարման միջին տևողությունը 2021թ կազմել է 53 օր, իսկ 2020թ՝ 85 օր: Ղեկավարությունը հավատացած է, որ պետական բյուջեից դեբիտորական պարտքերն ամբողջովին ենթակա են վերականգնման:

9. Ֆինանսական ներդրումներ

Հազար ՀՀ դրամ	Ոչ ընթացիկ	Ընթացիկ	Ընդամենը
2020թ հունվարի 1-ի դրությամբ	-	3 170	3 170
Ավելացում	-	-	-
Պակասեցում	-	(2 720)	(2 720)
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	450	450
Ավելացում	-	399 857	399 857
Պակասեցում	-	(15 974)	(15 974)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	384 333	384 333

Ֆինանսական ներդրումները բաղկացած են բանկային ավանդներից:

10. Դրամական միջոցներ

Հազար ՀՀ դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դրամական միջոցներ բանկային հաշիվներում	273 391	381 807
Կանխիկ դրամը դրամարկղում	430 820	2 723
	704 211	384 530

2021թ. դեկտեմբերի 31-ի և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության բանկում բացված հաշիվներում առկա և հետագայում այդ հաշիվներին մուտքագրվող դրամական միջոցները գրավավադրվել են «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում ստացված վարկի դիմաց:

11. Մեփական կապիտալ

Կանոնադրական կապիտալ

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 156 674 000 (հարյուր հիսուն վեց միլիոն վեց հարյուր յոթանասուն չորս հազար) ՀՀ դրամ, որը բաղկացած է 2 170 (երկու հազար հարյուր յոթանասուն) հատ բաժնեմասից, մեկ բաժնեմասի արժեքը կազմում է 72200 (յոթանասուն երկու հազար երկու հարյուր) ՀՀ դրամ: Բոլոր բաժնեմասերը տեղաբաշխված են բաժնետերերի միջև և լրիվ վճարված են նրանց կողմից:

Էմիսիոն եկամուտ

Էմիսիոն եկամուտը առաջացել է բաժնեմասերի անվանական արժեքից ավելի բարձր գումարով տեղաբաշխման արդյունքում:

Պահուստային կապիտալ

Ընկերությունը կուտակված շահույթի հաշվին պետք է ստեղծի պահուստային կապիտալ, որը կարգավորված է Ընկերության կանոնադրությամբ: Այն օգտագործվելու է վնասների ծածկման, շահաբաժինների վճարման և կանոնադրական կապիտալի ավելացման նպատակներով: Ընկերությունը 31.12.2021թ և 31.12.2020թ դրությամբ պահուստային կապիտալի համարում չի կատարել:

Շահաբաժիններ

Ընկերությունը 2021թ և 2020թ համար շահաբաժին չի հայտարարել:

12. Վարկեր և փոխառություններ

Հազար ՀՀ դրամ	2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ոչ ընթացիկ		
Երկարաժամկետ վարկեր	3 694 773	4 262 558
Նրկարաժամկետ փոխառություններ	-	853 010
	3 694 773	5 115 568
Ընթացիկ		
Կարճաժամկետ վարկեր	9 339	147 922
Երկարաժամկետ վարկերի կարճաժամկետ մաս	200 893	109 229
	210 232	257 151
	3 905 005	5 372 719

2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության գործող վարկերի և փոխառությունների վերաբերյալ առկա է հետևյալ տեղեկատվությունը.

13. Հետաձգված հարկ

Ճանաչված հետաձգված հարկային ակտիվներ / (պարտավորություններ)

Հազար ՀՀ դրամ	Հետաձգված հարկային ակտիվներ		Հետաձգված հարկային պարտավորություններ		Չուտ հետաձգված հարկ	
	2021թ	2020թ	2021թ	2020թ	2021թ	2020թ
Պաշարներ	-	3 332			-	3 332
Դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստ	19 554	19 923			19 554	19 923
Վաստակած արձակուրդայինի գծով պահուստ	23 316	22 494	-	-	23 316	22 494
	42 870	45 749	-	-	42 870	45 749

Ժամանակավոր տարբերությունների շարժը տարվա ընթացքում

Հազար դրամ	2019թ հունվարի 1-ի դրությամբ	Եկամտում ճանաչված	2019թ դեկտեմ- բերի 31-ի դրությամբ	Եկամտում ճանաչված	2020թ դեկտեմ- բերի 31-ի դրությամբ	Եկամտում ճանաչված	2021թ դեկտեմ- բերի 31-ի դրությամբ
Պաշարներ			-	3 332	3 332	(3 332)	-
Գերհտորա- կան պարտքերի ինսարավոր կորուստների պահուստ			-	19 923	19 923	(369)	19 554
Վատտակած արձակուր- դայինի գծով պահուստ		20 752	20 752	1 742	22 494	822	23 316
Զուտ հետաձգված հարկ	-	20752	20 752	24 997	45 749	(2 879)	42 870

14. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար ՀՀ դրամ	2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	119 983	121 222
Ստացված կանխավճարներ	10 007	35 352
Պարտքերի հարկերի և այլ պարտավորված վճարների գծով	290 055	60 362
Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով	2 828	1 127
Հատուցումներ աշխատակիցներին	89	576
Այլ կրեդիտորական պարտք	385	168
	423 347	218 807

Ընկերության կրեդիտորական պարտքերի մարման միջին տևողությունը 2021թ կազմել է 26 օր, իսկ 2020թ՝ 28 օր:

Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվառվում: Ընկերությունն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություն, որն ապահովում է բոլոր պարտավորությունների ժամանակին կատարումը:

Հարկերի և պարտադիր վճարների գծով կրեդիտորական պարտքը բաղկացած է հետևյալից՝

Հազար ՀՀ դրամ	2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Շահութահարկ	205 705	3 716
Եկամտային հարկ	18 808	10 691
Ամբողջական արժեքի հարկ	64 282	44 733
Հողի հարկ	-	-
Գույքահարկ	-	1 152
Այլ	1 260	70
	290 055	60 362

Վարձակալական վճարների գծով ոչ ընթացիկ կանխավճարներ 2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 69188 հազար դրամ, իսկ 2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 73 739 հազար դրամ: Այն իրենից ներկայացնում է վարձակալական վճարի վերջին ամսվա գումարը, որը Ընկերության կողմից գանձվում է վարձակալության պայմանագիրը կնքելու ժամանակ:

15 Պահուստներ

Հազար ՀՀ դրամ

Վաստակած արձակուրդայինի գծով պահուստ

2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
129 534	124 969
129 534	124 969

16. Հասույթ, վաճառքի ինքնարժեք

Հասույթ

Հազար ՀՀ դրամ

Ապրանքների վաճառքներից հասույթ
Ծառայությունների մատուցումից հասույթ

2021թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
198 879	59 967
4 184 761	2 548 281
4 383 641	2 608 248

Վաճառքի ինքնարժեք

Հազար ՀՀ դրամ

Վաճառված ապրանքների ինքնարժեք

2021թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
61 778	18 305
61 778	18 305

17. Ծառայությունների մատուցման գծով ծախսեր

Հազար ՀՀ դրամ

Աշխատավարձ
Մաշվածություն և ամորտիզացիա
Մարկետինգի եւ գովազդի ծախսեր
Կոմունալ ծախսեր
Կինոթատրոնի ծախսեր
Մաքրման ծառայության գծով ծախսեր
Պահպանության ծառայության գծով ծախսեր
Տեխնիկական սպասարկման ծախսեր
Այլ

2021թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
243 199	319 102
116 361	163 016
97 205	48 200
572 525	459 934
233 538	72 714
145 015	77 083
82 835	132 864
50 664	54 944
101 833	62 749
1 643 175	1 390 606

18. Վարչական ծախսեր

Հազար ՀՀ դրամ

Աշխատավարձ
Մաշվածություն և ամորտիզացիա
Գործուղման և ներկայացուցչական
Փոստի, հեռահաղորդակցության
Գրասենյակային, կոմունալ
Աուդիտորական և խորհրդատվական
Բանկային և ապահովագրության
Զինվորատուցվող հարկերից ծախսեր
Այլ

2021թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
377 515	305 567
255 862	490 158
700	370
9 205	8 462
4 670	2 686
13 125	3 976
23 378	24 373
109 567	89 456
64 344	24 131
858 366	949 179

19. Այլ եկամուտներ և ծախսեր

Այլ եկամուտներ

	2021թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հազար ՀՀ դրամ		
Նվիրատվությունից եկամուտներ	-	641
Հիմնական միջոցների օտարումներից եկամուտներ	-	183
Այլ եկամուտներ	6 375	1 339
	6 375	2 163

Այլ ծախսեր

	2021թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հազար ՀՀ դրամ		
Ծախսեր տույժերից, տուգանքներից, դատական ծախսեր	2 054	9 368
Անհատույց տրված ակտիվների գծով ծախսեր	12 777	13 345
Նյութերի ինքնարժեքի՝ մինչև իրացման գույք արժեքի իջեցման գծով ծախսեր	-	18 516
Դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի գծով ծախսեր	-	110 684
Արձակուրդայինի պահուստաֆոնդին հատկացում	4 564	9 681
Այլ ծախսեր	15 938	4 338
	35 333	165 932

20. Ֆինանսական եկամուտներ և ծախսեր

Ֆինանսական ծախսեր

	2021թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հազար ՀՀ դրամ		
Վարկերի և փոխառությունների գծով տոկոսային ծախսեր	312 325	315 593
	312 325	315 593

21. Այլ օգուտ (կորուստ)

	2021թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հազար ՀՀ դրամ		
Փոխարժեքային տարբերություններից եկամուտ	628 158	52 328
Փոխարժեքային տարբերություններից ծախս	(279 347)	(438 803)
	348 811	(386 475)

22. Շահութահարկ

Շահութահարկի գծով ծախսի հիմնական բաղադրիչներն են

Հազար ՀՀ դրամ	2021թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ շահութահարկ՝		
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս	219 990	3 176
Հետաձգված հարկեր		
Ժամանակային տարբերությունների ծագում և հակադարձում	2 879	(24 997)
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներկայացված շահութահարկի գծով ծախս / (օգուտ)	222 869	(21 821)

23. Ֆինանսական գործիքներ

Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.11-ում:

Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	704 211	384 530
Դեբիտորական պարտք վանառքների գծով	518 817	501 888
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ	384 333	450
Ընդամենը	1 607 361	886 868

Ֆինանսական պարտավորություններ

	2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային այլ կրեդիտորական պարտքեր	120 368	121 390
Վարկեր և փոխառություններ	3 905 005	5 372 719
Ընդամենը	4 025 373	5 494 109

24. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղությամբ

Ընկերությունը իր բնականոն գործունեության ընթացքում ենթարկվում է շուկայական (որը ներառում է արտարժույթային), պարտքային և իրացվելիության ռիսկերի:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ընկերության գործունեությունն ուղղակիորեն ենթարկվում է արտարժույթային, տոկոսադրույքային ռիսկերի փոփոխությունների ազդեցությանը:

Արտարժույթային ռիսկ

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Արտարժույթի ռիսկի նկատմամբ Ընկերության ենթարկվածությունը կապված է ֆունկցիոնալ արժույթից տարբեր այլ արժույթից տարբեր այլ արժույթով արտահայտված վաճառքների, ձեռքբերումների և փոխառությունների հետ: Արտարժույթի ռիսկ հիմնականում առաջացնում են ԱՄՆ դոլարը և եվրոն:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Ընկերությանը ենթարկվում են արտարժույթային ռիսկի, նկարագրված են ստորև:

Հոդված	2021թ.	2020թ.
	ԱՄՆ դոլար՝ ՀՀ դրամով վերահաշվարկված	ԱՄՆ դոլար՝ ՀՀ դրամով վերահաշվարկված
Ֆինանսական ակտիվներ		
Բանկային ավանդներ	384 333	-
Դրամական միջոցներ	117 169	52 260
Ֆինանսական պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	3 829 309	4 662 524
Առևտրային կրեդիտորական պարտքեր	12 779	-
Զուտ արդյունք	(3 340 586)	(4 610 264)

Տարվա ընթացքում կիրառվել են արտարժույթի հետևյալ փոխարժեքները՝

	2021թ.	2020թ.
ԱՄՆ դոլար	480,14	522,59

Զգայունության վերլուծություն

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ընկերության զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի 10% (2020թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2020թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2020թ.՝ 10%): Զգայունության վերլուծությունը ներառում է կապակցված և ոչ կապակցված կողմերից վարկերը և փոխառությունները: Բացասական ցուցանիշը նվազում է վկայում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և՛ սեփական կապիտալում, երբ դրամն արժեզրկվում է համապատասխան արժույթի նկատմամբ:

	Սեփական կապիտալ	Շահույթ կամ վնաս
2021թ.		
ԱՄՆ դոլար (10% ամրապնդում)	(334 059)	(334 059)
2020թ.		
ԱՄՆ դոլար (10% ամրապնդում)	(461 026)	(461 026)

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն են ունենում հիմնականում տրված փոխառությունների և ստացված վարկերի ու փոխառությունների վրա՝ փոխելով կամ դրանց իրական արժեքը (ֆիքսված դրույքով պարտք) կամ դրամական միջոցների ապագա հոսքերը (փոփոխական դրույքով պարտք): Ղեկավարությունը չի կիրառում ֆիքսված կամ փոփոխական դրույքների նկատմամբ Ընկերության ենթարկվածության չափը որոշող ձևակերպված քաղաքականություն: Այնուամենայնիվ, նոր ֆինանսական գործիքի առումով ղեկավարությունը հիմնվում է իր դատողությունների վրա՝ մինչև մարման ժամկետն ակնկալվող ժամանակաշրջանի ընթացքում ֆիքսված կամ փոփոխական դրույքներ կիրառելու նպատակահարմարության վերաբերյալ որոշում կայացնելիս: Ներկայումս Ընկերությունը չունի տոկոսային ռիսկ ձևավորող փոփոխական տոկոսադրույքով ֆինանսական պարտավորություններ:

բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ պատվիրատուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պարտավորությունները Ընկերության նկատմամբ: Պարտքային ռիսկն առաջանում է հիմնականում պատվիրատուներից ստացման ենթակա դեբիտորական պարտքերի և այլ անձանց տրված փոխառությունների գծով: Ընկերությունը չի պահանջում գրավ ֆինանսական ակտիվների գծով: Պարտավորությունների կատարման գծով ռիսկերի գնահատումները իրականացվում են որոշակի սահմանները գերազանցող գումարներ պահանջող հաճախորդների համար, բացառությամբ կապակցված կողմերի:

Ենթարկվածությունը վարկային ռիսկին

Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացնում է պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը: Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը:

Հազար ՀՀ դրամ	Հաշվեկշռային արժեք	
	2021թ	2020թ
Ֆինանսական ներդրումներ	384 333	450
Առևտրային դեբիտորական պարտքեր	518 817	501 888
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	704 211	384 530
Ընդամենը	1 607 361	886 868

Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրային դեբիտորական պարտքերի գծով վարկային ռիսկին առավելագույն ենթարկվածությունն ըստ աշխարհագրական տարածաշրջանների:

Հազար ՀՀ դրամ	Հաշվեկշռային արժեք	
	2021թ	2020թ
Տեղական	518 817	501 888
Ընդամենը	518 817	501 888

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Ընկերությունը կունենա դժվարություններ^ա իր ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնց Իրացվելիության ռիսկի կառավարման հարցում Ընկերության մոտեցումն է ապահովել բավարար իրացվելիություն բնականոն և արտակարգ իրավիճակներում պարտավորությունները կատարելու համար^ա առանց անընդունելի կորուստներ կրելու կամ Ընկերության համբավը վտանգելու:

Կապիտալի ռիսկի կառավարում

Ընկերությունն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունը առավելագույնին հասցնելով բաժնետերերի եկամուտները^ա փոխառու և կապիտալ միջոցների օպտիմալ համապատասխանություն ապահովելու միջոցով:

Ընկերության կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է թողարկված կապիտալը, կուտակված շահույթը, ինչպես նաև փոխառու միջոցները, որոնք ներառում են վարկերը՝ բացահայտված ծանոթագրություն 11-ում և 12-ում:

Ընկերության ղեկավարությունը պարբերաբար վերանայում է կապիտալի կառուցվածքը, որպեսզի ապահովի փոխառու միջոցների և սեփական կապիտալի մնացորդների առավելագույն օպտիմալ համապատասխանություն, որը վերլուծվում է՝ հաշվառելով ֆինանսական լծակը (զուտ պարտավորությունը բաժանած ընդհանուր կապիտալի վրա), հետևյալ կերպ

Հազար ՀՀ դրամ

Ընդհանուր վարկեր
Հանած դրամական միջոցներ և դրանց համարժեքներ
Չուտ պարտավորություն
Ընդհանուր սեփական կապիտալ
Ընդհանուր կապիտալ
Ֆինանսական լծակ

2021թ դեկտեմբերի 31-ի
դրությամբ

3 905 005
(704 211)
3 200 794
7 221 240
10 422 034
30,71

2020թ դեկտեմբերի 31-ի
դրությամբ

5 372 719
(384 530)
4 988 189
5 616 259
10 604 448
47,04

Իրական արժեք

Ղեկավարությունը գտնում է, որ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքները մոտավորապես համապատասխանում են դրանց հաշվեկշռային արժեքներին:

25. Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Այս ֆինանսական հաշվետվությունները ՓՄԿ ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումներն ու համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

- ✚ Ծանոթագրություն 4 – հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետը
- ✚ Ծանոթագրություն 5 – Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետ
- ✚ Ծանոթագրություն 12 – վարկեր և փոխառություններ
- ✚ Ծանոթագրություն 13 – հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Ապագայի վերաբերյալ ենթադրությունների, ինչպես նաև գնահատման անորոշության հիմնական այլ աղբյուրների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնց դեպքում առկա է նշանակալի ռիսկ, որ դրանք հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում կարող են հանգեցնել ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտումների, ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում:

- ✚ Ծանոթագրություն 26 – պայմանականություններ

26. Պայմանականություններ

Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները շարունակական բնույթ են կրում: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված գործարքներին:

Ընկերության վրա այս գործոնների հնարավոր հետևանքները կարող են ներառել վարկատուների հանդեպ անվճարունակությունը, խաթարված հեղինակությունը, ապրանքների և ծառայությունների վաճառքի, ինչպես նաև ֆինանսական միջոցների ձեռքբերման հետ կապված դժվարությունները և այլն: Բոլոր այս խնդիրները կարող են հանգեցնել Ընկերության իրացվելիության անկման և, հետևաբար, առաջացնել անընդհատության խնդիրներ:

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը, բացառությամբ տրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրությունից իր ակտիվների, գործունեության ընդհատման կամ երրորդ կողմերի պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ գույքի

կամ գործառնությունների պատահարներից հասցված վնասից ապահովագրություն չունի:

Հարկային միջավայր

Հայաստանի Հանրապետության հարկային, արժույթային և մաքսային օրենսդրությունը պարբերաբար տարբեր մեկնաբանությունների և փոփոխությունների առարկա է հանդիսանում: Ընկերությունը գտնում է, որ համապատասխան պետական կարգավորող մարմինների կողմից մեկնաբանությունները կարող են ազդել Ընկերության գործարքների և գործունեության վրա: Հարկային մարմինները կարող են ավելի խիստ դիրքորոշում քնդունել օրենսդրության մեկնաբանությունների և գնահատման գծով, որի արդյունքում հնարավոր է, որ այն գործարքների և գործունեության հարկային հաշվառման նկատմամբ վերաբերմունքը փոխվի, որոնց նախկինում հարկային մարմինները չէին անդրադարձել: Որպես այդպիսին լրացուցիչ հարկերը, տույժերը և տուգանքները կարող են հարկային մարմինների կողմից հաշվարկվել:

Ընկերությունը գտնում է, որ 2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը պատշաճ կերպով էր կատարում համապատասխան օրենքների պահանջները և Ընկերության հարկային, արժույթային և մաքսային դրությունը կայուն է:

Ղատական վարույթներ

Ընկերությունը ներգրավված չէ այնպիսի խոշոր ղատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ իր ֆինանսական վիճակի վրա:

27. Գործարքներ կապակցված կողմերի միջև

Վերահսկողություն

Ընկերության կապակցված կողմեր են հանդիսանում են հանդիսանում նրա բաժնետերերը և Ընկերության տնօրենը: Ընկերության և նրա հետ փոխկապակցված անձանց միջև գործարքների մանրամասները բացահայտված են ստորև:

Հազար ՀՀ դրամ	Մնացորդը 31.12.2020թ	Գործարքի արժեքը գում 2021թ.	Մնացորդը 31.12.2021թ
Ստացված փոխառություններ			
«Ազր Ռեալ Լիմիթեդ» ՍՊԸ	369 417	(369 417)	-
«Էրմոլիա Սերվիսիզ» ՍՊԸ	8 149	(8 149)	-
Մանուշարյան Ռաֆայել	53 262	(53 262)	-
Խաչատրյան Նորայր	56 819	(56 819)	-
Մեկոյան Վազրիկ	365 263	(365 263)	-
Տնօրենին վճարված աշխատավարձ			
Մեկոյան Վազրիկ	-	89 496	-

28. Հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տեղի ունեցող դեպքեր

Ճշգրտվող դեպքեր հաշվետու ամսաթվից հետո (31.12.2021թ) մինչև ֆինանսական հաշվետվությունների վավերացման ամսաթիվը՝ (06.06.2022թ) տեղի չեն ունեցել:

Կորոնավիրուսային համաճարակի /COVID-19/ զարգացումների մասշտաբը և տևողությունը մնում են անորոշ և դրանք կարող են ազդեցություն ունենալ Ընկերության դրամական միջոցների հոսքերի և ֆինանսական վիճակի վրա: Ընկերությունը այս համաճարակը համարում է հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող չճշգրտող իրադարձություն, որի ֆինանսական ազդեցությունը ներկայումս չի կարող գնահատվել վստահության բավարար մակարդակով:

Տնօրեն՝

Վ. Մեկոյան



Գլխավոր հաշվապահ՝

Ն. Մանուկյան